

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Ա. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 22 ՇԱՐԱՔ 1897

ԹԻԻ 5

40 ՓԱՐԱ 40

ՏԵՐ ԵՒ ԽՍՐԱԳԻՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Ճ. ԱՐԱՄԵԱՆ

1897

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼԻՍՏԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

Փետրուար 22, Շաբաթ 1897

Թիւ 5

Կ. Պոլսոյ համար Տարեկան կանխիկ 50 Դանեկան. Գաւառաց համար Տարեկան կանխիկ 60 Դանեկան. Օտար երկրաց համար Տարեկան կանխիկ 70 Դանեկան. Թղթասարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի : — Ծանուցումով ու Ազգի կը հրատարակուին լրագրաց սովորական տպայմաններուն համեմատ : — Հասցեն՝ Առ Արժուանքին ու Խմբագիրն Հանրագիտակի, Կ. Պոլիս

حازم قيداك (مجموعه علوم) غزوة سنك صاحب امتياز و محرري در ساداته آرمين لوسينيان

Hamrakidague, Journal Arménien encyclopédique. Propriétaire et Rédacteur Armène Loussinian, Constantinople.

Ն Ի Ի Թ Ք

Պատմութիւն Գերմանական գրականութեան. Լեզուն : Գրական պատմութեան մեծ բաժանումներ : Առաջին շրջան, Ծագումն Գերման գրականութեան, ամենահին ժամանակներէ մինչեւ 800 : Տեղեկական աղբիւր : Երկն Հիւսիս-արեւմտայ : — Մարդկային սիրոյ պատմութիւնը. Գլուխ Ա. Արեւելի կամ չափահասութեան հանդէսներ : — Քաղաքական ցենսագրութիւն. Նախապաշարմունք բաղադրական ցենսագրութեան նկատմամբ, եւ թէ ի՞նչ է ողորմաժամասիրութիւնը : Բաժանումն Քաղաքական ցենսագրութեան : — Ենթակալիւնն ու պատասխանիւն «Հանրագիտակ»ին առ Ա. Մամուլն. եւ այլն : — Ազգային ու Միջազգային կարեւորագոյն լուրերն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԼԵԶՈՒՆ

Իեռ որոշ կերպով ճշգուած չէ թէ այսօրուան Ալմաններուն նախնիքն եղող ժեհմէնները կամ Գերմաններն առաջին անգամ երբ գաղթեցին եւ հաստատուեցան Եւրոպայի մէջ : Անոնցմէն

ոմանք՝ Տեսնոն կոչուած ցեղայինը, բնակեցան Պալթիկ ծովուն եզերքները, հիւսիսային դաւառաց մէջ, եւ Սկանիանովեան երկիրներուն մէջ : Ասոնցմէ յետոյ՝ Գերմանաց մէկ ուրիշ ցեղն ալ՝ Ֆրանկները՝ (այժմեան Ֆրանսացւոց նախահայրքը), դէպ Հարաւ առաջացան, զարկին դէպ Արեւմուտք քշեցին, իրենցմէն առաջ Հռենոսի ափանց վրայ բնակութիւն հաստատած կեղտերը, եւ իրենք հաստատուեցան Ալմանիոյ կեդրոնին եւ հիւսիսային կողմանց մէջ : Վերջապէս Գերմանական ուրիշ ժողովուրդներ՝ Գոթները կամ Գոթացիք՝ որք ամենէն աւելի հզօրներն էին, տեղաւորուեցան Պալթիկ ծովը թափող Վիսթուլի գետափանց վրայ : Յոյն նաւարկութեամբ Քրիստոնեայ թուականէն երեք դար առաջ՝ տեսնան Գոթերն հան : Այս հզօր ժողովուրդն մինչեւ Դանուբ յաղթանակեց, հալածեց եւ ստիպեց Հռովմէական լէգէոններն որ ցիր ու ցան փախան Գոթաց յարձակումներէն, Եւրոպայի հարաւային ու արեւելեան բոլոր երկիրներն ողողեցին, գրաւեցին, եւ վերջապէս Հռովմէական աշխարհի ա-

ւերակաց վրայ կանգնեցին Արեւելեան կողմը՝ Օստրադոթաց, եւ Արեւմտեան կողմը՝ Վիսիգոթաց անտաճման պետութիւնը: (Օստրոգոթք՝ Արեւելեան Գոթեր եւ Վիսիգոթք՝ Արեւմտեան Գոթեր ըսել է):

Գերման ցեղերու նման այլ եւ այլ ցեղերէ կազմուած ժողովուրդ մ'անշուշտ այլ եւ այլ գաւառաբարբառներ ալ պիտի ունենար:

Աշխարհագրական կամ տեղագրական տեսակէտով սապէս կրնանք զատել կամ որոշել այս ժողովուրդին խօսած այլ եւ այլ գաւառաբարբառները,

1. Գոթականը կամ Գոթերէնը, ամենէն աւելի հին գաւառաբարբառն է, եւ ամենէն աւելի հին Գերմաներէնին՝ եւ հետեւապէս Սանսգրիտ լեզուին ալ մերձաւորը, թէ ամենէն աւելի հնչուն եւ թէ Բերականական ամեն ձեւերու, փոփոխմանց, հոլովմանց, խոնարհմանց կողմանէ ամենէն աւելի ճոխն է:

2. Հին Նօրուական գաւառաբարբառները, որք կը գտնուին Նորվեգերէնին, Դանիերէնին, Շուէտերէնին եւ Իսլանտերէնին մէջ: Այս հին Նօրուական լեզուով գրուած, պահուած են հին աւանդապատումներու, առասպելներու երկու հաւաքածոյքը՝ որք ԼՏՏԱ կ'կոչուին, եւ այս երկու մատենաւոր՝ Սկանտինավեան եւ Գերմանական գիյարանութեան մասին՝ մեր ունեցած ծանօթութեանց երկու աղբերակուներն են:

3. Հին Արմաներէնը որ յաջորդեց Գոթականին կամ Գոթերէնին, եւ ուր պէտք է որոշել Ստորին-Արմաներէն գաւառաբարբառները եւ Վերին-Արմաներէն գաւառաբարբառները,

Ա. Հին Ստորին-Արմաներէն գաւառաբարբառները, որք կը խօսուին ծովեզերաց վրայ եւ Հիւսիսային դաշտաց մէջ, հին Սաքսոներէնը՝ արդի Սաքսո-

ներէնը, Ֆրիզոներէնը, Նէրլանտերէնը եւ Անկլո-Սաքսոներէնը (որ այժմեան Անգլիերէնն եղած է ուրիշ լեզուային տարրաց օգնութեամբ):

Բ. Հին Վերին-Արման գաւառաբարբառները, որք կը խօսուին հաւաքային Ալմանիոյ լեռնային երկիրներուն մէջ, հիւսիսային գաւառաբարբառներէն աւելի կարծր ու աւելի կոկորդային, եւ են Սուապերէնը, Ֆրանգ գաւառաբարբառները, Ալմանակերպ գաւառաբարբառները. (Չուիցերիոյ մէջ, Ալզասի մէջ, Պատէնի երկիրներուն մէջ), Պավերիական եւ Աւստրիական գաւառաբարբառները: Այժմեան Ալմաներէնը Հին Վերին-Արման գաւառաբարբառներէն յօրինուած է:

Ժամանակադրական տեսակէտով՝ Վերին-Արմաներէնի պատմութեան մէջ երեք պարբերական որոշ չրջան կ'գտնենք:

1. Հին Վերին-Արմաներէնը, որ Գոթականին յաջորդեց, եւ ուր Ֆրանգ գաւառաբարբառները կ'իշխէին, կը տեւէ գրեթէ 450 էն մինչեւ 1100:

2. Միջին Վերին Արմաներէնը, ուր Սուապերէն եւ Աւստրիերէն գաւառաբարբառը կը տիրեն 1100 էն մինչեւ 1300:

Գ. Նոր Վերին Ալմաներէնը՝ 1300 էն, ուր կ'տիրէ Բարձր-Սաքսոներէնը՝ իբր կեդրոնին լեզուն, որ Հիւսիսային ու Հաւաքային գաւառաբարբառներու ձուլումն է: Լուտեր այս լեզուով Աստուածաշունչը թարգմանեց, որով այս Գերմաներէնն աւելի հաստատունցաւ եւ ժողովրդականացաւ, եւ դարէ դար աւելի կաաարեւրագործուելով՝ դասական Ալմաներէնն եղաւ:

ԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԲԱԺԱՆՄՈՒՆԲԸ

Գերմանական գրականութեան պատմութիւնը կը բաժնուի ինը շրջաններու:

Ա. Ծաղումէն մինչեւ Մեծն Կարու-
լոս (Շառլըմայնը) (800): Կռապաշտու-
թիւնն ու բարբարոսաց արշաւանքները:

Բ. Քրիստոնեայ բանաստեղծութիւ-
նը (800—1100):

Դ. Դասական առաջին դարը (1100—
1300):

Դ. Միջին դարու վախճանը (1300—
1517):

Ե. Վերանորոգումն եւ Վերածնու-
թիւնը (1517—1624):

Զ. Երեսնից ամաց պատերազմը: Օ-
տարերէնի նմանութիւնը (1624—1730):

Է. Մեծն Ֆրէտէրիկի Դարը: Ազգա-
յին Հանճարոյն Վերականգնումը (1730—
1759):

Ը. Երկրորդ Դասական Դարը (1759
—1805):

Թ. — 19^{րդ} Դարը:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

ԾԱԳՈՒՄՆ ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ամենահին ժամանակներէ մինչեւ 800

Կեսոր եւ Տակիտոս մեզ աւանդած են
ինչ որ գիտենք նախնի Գերմանաց մա-
սին: Դերմաններու Բարոց հեղինակն
անկողնափառութեամբ, հազուադիւ-
որամտութեամբ, գրեթէ զմայլումով
մը կը դատէ Հռոմայ թշնամիները: Այս
կորովի ու բիրտ ցեղին մէջ՝ սմենէ աւելի
ուշագրաւ էին իրենց պատերազմական
երգերուն կրօնական հանգամանքն եւ
բանաստեղծութեան ընծայած կարեւո-
րութիւնը: Դերմանները, կ'ըսէ Տակի-
տոս, պատերազմի երթալէ առաջ, կը
հնչեցնէին երգեր՝ ի պատիւ իրենց գիւ-
ն եւ դիւցազանց՝ իրենց ցեղին նախա-
հարց, եւ իրենց կտրճութեան ոգին կը
բոցավառէր պատերազմական երգերուն
ձայնովը: Դժբախտաբար այս բոլոր եր-

գերն ալ կորսուած են: Նոյն իսկ բա-
նաստեղծներուն ամենաախրելի գիւյա-
ղին՝ ՍՐՄԼՆԻՈՍԻ անունն անգամ աւան-
դաբար առ մեզ հասած է: Այս սկայորդի
Արմէնիոսին ի պատիւ յօրինուած երգերն
անհետացած են բարբարոսաց մեծ ար-
շաւանքներուն միջոցին:

Բանաստեղծութիւնը սերտ կապակ-
ցութիւն մ'ունէր, Գերմանաց մէջ, իրենց
բոլորովին հոգեպաշտական կրօնքին հետ:
Տակիտոս այս մասին երկարօրէն կը խօ-
սի, բազդատելով աներեւելի եւ ան-
խորհրդաւոր Աստուածոց մատուցած
անոնց պաշտամունքը՝ Հռոմայեցւոց զգա-
յական կռապաշտութեան հետ:

Սկանտինավեան ԼՏՏԱՆԵՐՈՆ (ստոնց
վրայ՝ Սկանտինավեան գրականութեան
մէջ պիտի խօսինք) հաւաքածոյքին մէջ կը
գտնուին մեծ արշաւանքներէն առաջ հին
Գերմանաց նուիրական եւ դիւցազնական
աւանդապատումները:

Արշաւանաց ժամանակէն իսկ, Գ.^{րդ}
Դարէն, ունինք պատկառելի արձակ մա-
տենագրութեան մը յիշատակարանը:
Յարձակող բոլոր ցեղերէն նշանաւորն
եղած էին Դոթերը (Դոթացիք): Ասոնք
Հռովմէական Կայսրութեան ստհմանաց
վրայ հաստատուած՝ առաջին անգամ
իրենք ընդունեցին Քրիստոնէութիւնը:
Իւլֆիլա Վիսիգոթը՝ որ ցեղային ծագ-
մամբն Յոյն էր, իր ժողովրդին մեծ մա-
սը Քրիստոնեայ ընելէն յետոյ, ինքն
ալ Արիստական ազանդն ընդունեց:
Վիսիգոթաց մէջ աստուածապաշտու-
թեան եւ Քրիստոնէութեան սկզբուն-
քն ու ոգին աւելի զարգացնելու, տա-
րածելու համար թարգմանեց Աստուա-
ծաշունչը, եօթանասնից ձեռօք Եբրա-
յական բնագրէն թարգմանուած Յոյն
բնագիրն ընտրելով առաջնորդ՝ Հին Կտա-
կարանին համար, եւ Նոր Կտակարանին
համար՝ Յոյն սկզբնական բնագիրը: Դո-

Թական լեզուով գրուած առաջին յիշատակարանը կը պարտինք ուրեմն Քրիստոնէութեան : Գոթաց հետ անհետացաւ Գոթական լեզուն՝ բայց Իւլֆիլիսի գործը կը վկայէ Գոթական լեզուին ճոխութիւնն և անոր հնչուն ներդաշնակութիւնը : Իւլֆիլիսին փառաց տիտղոսը միայն այդ չէ . նոր գիրով մ'ալ օժտեց իր ժողովուրդը : Գոթերը (Գոթացիք), Գերմանական ուրիշ ցեղերուն պէս, Բունակաւն (հին Սկանտինավեան) նշաններ կը գործածէին . տեսակ մը խորհրդաւոր, անկիւնաւոր և քառակուսի նշանագրեր, քարի ու փայտի վրայ ընդհանրապէս քանդակուած, փորուած : Իւլֆիլիսն հնարեց յունական տառերէ և բունական զրանիշներէ խառն գիր մը՝ զոր կարելի էր նկարել մագաղաթի վրայ, եւ այս Իւլֆիլիսկաւն տառերով գրուած են Ս. Գրքի Թարգմանութեան սկզբնական ձեռագրին այն այլ և այլ հատու կոտոր պատառիկներն՝ որք զընունեցան 15^{րդ} Դարուն : Այս Թանկագին Թարգմանութեան ամենէ աւելի կատարեալ և ամենէ աւելի նշանաւոր ձեռագիրը՝ Վէսթֆալիոյ մէջ Վէրտէն Աբբայարանին մէջ գտնուածն է, որ՝ Երեսնից Ամաց պատերազմի միջոցին կամ անկէ յետոյ՝ Շուէտ փոխադրուեցաւ, և այսօր Իւբուալի Համալսարանին սեփականութիւնն է, Codex Argenteus անունովը ծանօթ . ծիրանեգոյն մագաղաթի վրայ ոսկեղէն եւ արծաթեղէն տառերով գրուած :

Գոթական լեզուէն՝ մէկ նմոյշ մ'ընծայելու համար՝ մեր բանասէր ու լեզուասէր ընթերցողաց, սոյն ձեռագրին մէջ գտնուած և Գոթական լեզուով գրուած Տէրունական աղօթքը՝ Հայր մերը կընդօրինակեմք Եւրոպագրով :

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՅՔ

Atta unsar, thu in himinam,
veihnai, namô thein, qimai thiudinnassus theins;
vairthai vilja theins,

svê in himina, jah ana airthai; hlaif unsarana thana sinteinan, gif uns himma daga; jah aflêts uns, thatei skulans sijaima, svasvê jah veis aflêtam thaim skulam unsaraim; jah ni briggais uns in fraistubnjai. ak lausei uns af thamma ubilin; untê theina ist thiudangardi jah mahts jah vulthus in aivins. Amên. (*)

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո : Եկեցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի : Զհաց մեր հաճապագորդ՝ սուր մեզ ախօր. Թող մեզ զ'պարսիս մեր, որպէս եւ մեք քողովք մերոց պարսապանաց : Եւ մի՛ սանիր զ'մեզ ի՛ փորձութիւն այլ փրկեա՛ զ'մեզ ի՛ չարէ : Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաիսեանս յաիսեմից. Ամէն :

Գոթական լեզուն՝ Եր Դարէն սկսեալ դադարեցաւ գոյութիւն ունենալէ, Գոթացիք իրենք ալ անհետանալուն պէս, ուրիշ ցեղեր հաստատուեցան Գերմանիոյ մէջ, եւ հին Վերին - Ալմաներէնը յաջորդեց Գոթական լեզուին :

Այս լեզուով երգուեցան Օսարոգ ոթներուն, Հէրուրներուն, Ֆրանգներուն, Պուրկինտներուն և Հանաց մեծ դիւցաղները . Էրմանրիկ, Թէոտորիկ, Օտօգրը (Սւգոգրագոր), Սիհֆրիտ, Ատտիլա. Այս դիւցաղներն հռչակող, ներբողող ժողովրդական հագներգութիւնները (դիւցաղներգութիւն) կորսուած են արդարեւ . բայց անոնց յիշատակը կենդանի մնացած է : ԺԳ Դարու ժողովրդական մեծ

(*) Իւլֆիլիսի սոյն ձեռագիրը՝ Գերմանական լեզուաբաններու եւ բաղդատական բանասիրութեան համար՝ գլխաւոր ու վաւերական յիշատակարան մ'է :

դիւցաղներդու թեանց մէջ կը վերադառնանք անոնց արձագանդը, եւ դէթ անոնցմէն պահած ենք պատառիկ մը, ամենէ աւելի հին յուշակոտորն ալմանական բանաստեղծութեան նախնական դիւցաղներդու թեան, Հիյսպրանսին երգը: (*)

Թէոդորիկ եւ իւր հաւատարիմ Հիլտպրանտ՝ Հերուլներու արքայ՝ Օդոկրէն յաղթուած՝ կ'ստիպուին ապաստանիլ առ Ատտիլա, արքայն Հոնաց:

Երկար ամեր բացակայ մնալէն յետոյ, Թէոդորիկ կը վերադառնայ վերստին աշխարհակալած իւր Թագաւորանիսաւը, եւ Հիլտպրանտ, որ Թագաւորին ընկերակցելու համար լքած (երեսի վրայ թողած) էր իւր կիներն եւ իւր զաւակն երախայ, կը վերադառնայ իւր արքային հետ ի' միասին: Հիլտպրանտ երբ կը ժամանէ իւր Հայրենեաց սահմանազուխը, երիտասարդ պատերազմիկ մը զինքը նախատեսելով կ'արդեւիւր եւ չուզեր որ այլեւս առաջանայ:

Հիլտպրանտ կը քաշէ իւր սուր, բայց կռիւն սկսելէ առաջ՝ կը հարցնէ անունն իւր տխուրեանին (հակառակորդ) որ նոյն իսկ Հիլտպրանտին զաւակն է: Որդին կ'մերժէ յանձին Հիլտպրանտայ ճանչնալ իւր հայր, զոր երկար տարիներէ ի' վեր մեռած կը հաւատայ, եւ կ'սկսի կռիւն ընդ մէջ հօրն ու որդւոյն:

Թարգմանելով կը զետեղենք աստ ինչ որ հասած է առ մեզ այս վիպապատումէն իւր նախնական վեհութեան մէջ:

ԵՐԳՆ ՀԻՆՏՊՐԱՆՏԱՅ

Զրոյցն ինձ զեկուց թէ Հիլտպրանտն ու Հատիւպրանտն, հայրն ու որդին, ճայնատուրք ի' մարտ, գրգռեցին զիրար: Վառեա

(*) Մեծն Կարոյոս (Շառլըման) Գերմանական երգերն հաւաքել տուաւ, քննուելով հաստատուեցաւ թէ՛ սոյն երգին հնութիւնը կը հասնի մինչեւ Բարբարոսաց արշաւանքի տակնը, եւ Ատտիլայի աւանդապատումին մէկ կտորը կը կազմէ:

ցան ի' զէն. իրենց զրահքն հագան: Ճօճեցին իրենց սայրասուր սուրեր, եւ դիւցաղունքն երկողին խաղային ճակատ առ ճակատ. կուրծք մերձ առ կուրծք. երբ Հերպրանտայ ազնուազարմ զաւակն՝ իմաստունն Հիլպրանտ, իր խօսից մէջ հակիրճ, կ'ուղղէ միւս կտրճորդի ռազմիկին սա հարցում, ո' ոք էր, ի' մէջ արանց, Գո հայր: — «Ո՞ր զարմէն ես դուն, կ'ըսէ նա, ես քեզ կուտամ այս եռաթել հիւսկէն (երեք խաթ թելով՝ այսինքն հարուածէ անթափանցելի լինելու չափ հաստ հիւստեած) զրահը. պատերազմիկդ այս Թագաւորութեան, ես կը ճանաչեմ մարդկան բոլոր զարմերը (ցեղերը)»: — Հատիւպրանտ, Հիլպրանտին որդին, պատասխանեց, «Մերունի ու խեղանի որեարք (մարդիկ) որք կային էր երբեմն, ինձ ըսին թէ Հիլտպրանտ էր իմ հայրս, ես ալ կ'իյնչուիմ Հատիւպրանտ: Մի օր չուբաւ նա դէպ Արեւելք. Օդոկրի խեռ ու խեթէն խոյս տալով Տիեզրիկի եւ գրոհ (խուճ) մը մարտկաց հետ, Թոդուց երկիրը մանկամարդ կին մ'իւր յարկին մէջ, զաւակ մը մանկատի, զէնք ու զրահ մ'անտէր անտէրունչ, եւ խաղաց զնաց դէպ Արեւելք: Մարտին Աղէտն երբ զրաւեց (մեռացուց) Տիեզրիկ հօրորդիս (*) (հօրեղբորդիս). Հիլտպրանտ այլեւս զուրկ ի' բարեկամաց. ի' բաց խուսեց (հեռացաւ) Օդոկրէն, եւ խաղաց զնաց տարադէմ դէպ Արեւելք, եւ, ինքն, պատերազմիկ անվեհեր, Տիեզրիկի դժբախտ պատահարին ատեն, միշտ կանգուն կ'արձանանար ի' գլուխ դումարտակաց (զունդ). հոգւով չափ կ'սիրէր ճակատամարտներն. եւ բոլոր արիքն արանց կը ճանաչէին զինք. չեմ հաւատար որ ողջ ըլլայ դեռ:» — «Աստուած երկնից. Տէ՛ր մարդկան. զոչեց Հիլտպրանտ, մի' ներեր որ ծագի կռիւ այսպէս ազգական մարդոց մէջ:» Գակեց յայնժամ դաստակէն (սրիլէկ) ապարանջանի պէս հիւսուած շղթայ մը, զոր Հոնաց հզօր Թագաւորն էր տուած. «Ընդունէ՛, ըսաւ, իմ բարեկամութեանս այս նուէր»:

(*) Է՞ր չըսենք հօրորդի, փոխան հօրեղբորորդի կանգնաչափ բառին, ըստ անմահ Արմէնաբանին՝ լուսահոգի Տոդդոր Ռուսինեանի, որ Արմէներէնին ոսկերիչն էր, քանի որ մեր նախնիք կամար ի վերայ ջրոյ ասումը՝ կանուրջ բրած են: Մի օր մեք եւս պիտի լինինք մեր յետնոց նախնիքը:

— Հատկապա՛նտ անո՛ր պատասխանեց. «Նի-
զակո՛վ (մեզը՛րազ) միայն կընդունուի այսօ-
րինակ մի նուէր, եւ սոյր ընդդէմ սոյրի :
Զառա՛մ Հոն, լրտե՛սդ անարժան, դուն զիս
կը փորձես քու խօսքերով : Տէգս հիմա կը
նետեմ քեզ հա՛. դուն այդքան ծեր ես, եւ
չե՞ս երբէք երկնչիր սուտ զուրցելէ : Ինձ
ըսին անոնք որ կը նաւարկեն դէպ Արեւ-
մուտք, Վանտեանց ծովուն վրայ, (Պաղդիկ
ծովը՝ ոյր շուրջը Վանս անունով Սլավ ցեղ
մը կը բնակէր ի՛ նախնունմ), թէ մեծ պա-
տերազմ մը տեղի ունեցաւ, եւ թէ Հեր-
պրանտի որդին՝ Հիլպրանտը կորաւ կուռոյն
խռանին մէջ : — Հերպրանտին զաւակն՝ Հիլ-
պրանտ կը պատասխանէ նմա. « Յայտնի է
զրահէդ որ դուն ազնուական տիրոջ մը չես
ծառայեր, եւ թէ այս թագաւորութեան մէջ
տակաւին դուն յաղթութիւն տարած չես :
Ախտո՛ս, Աստուա՛ծ հզօր, ի՛նչ ճակատագիր
է իմս : Վաթսուն ամառներ ու ձմեռներ
թափառեցայ տարազրանաց մէջ, ո՛չ ոք եր-
բէք ուրեք զիս չիոթեց, տազնապեց պա-
տերազմիկներու հրոսին մէջ : Երբէք թշնամի
ոք չի չղթայեց, չի պրկեց սրունքներս իր
ամուր ուժով. եւ հիմակ պէտք է որ իմ
հարազատ զաւակս իր սուրն իմ կուրծքս
վարսէ (խօթէ) կացինովը զիս յօշոտէ (խըյ-
մալամիչ ընէ) կամ թէ ես իր մարդաս-
պանն ըլլամ : Անտարակոյս դուն կրնաս,
թէ որ ուժդ կ'օգտէ, քաջի մը գէնքը վրա-
յէն յափշտակել. կողոպտել իւր դիակը, երբ
իրաւունքն ալ ունենաս : Թող ուրեմն Արեւ-
մուտքի մարդոց մէջ ամենէն աւելի վատն ու
խտտանն ըլլայ, ըսաւ Հիլպրանտ, ա՛ն որ
մերժէ կռիւը՝ որուն այնքան եռանդով կը
բաղձաս դուն : Քաջ ընկերակիցք, դո՛ւք
դատեցէք թէ մեզմէ ո՞վ լուազոյն եւս պի-
տի արձակէ նետերը. ո՞վ պիտի տէր լինի
երկու զրահներուն » : Կ'արձակեն յայնժամ
իրենց սայրասուր նիզակները, որք կը խրին
իրենց ասպաճներուն մէջ, կը խուժեն, կը
յարձակին միմեանց դէմ, եւ իրենց շառա-
չուն կացիններով կը ճղբռտեն իրենց փայ-
լակնացայտ ասպարները, կ'դիրդին իրենց
զրահներ. բայց իրենց մարմիններ . . . :

— Վիպապատումը կ'ընդհատի ամենէն ա-
ւելի սրտաշարժ պահուն, եւ մեզ անծանօթ
կը մնայ կուռոյն ելքը (վախճանը) :

ՄԱՐԴԱՅԻՆ ՍԻՐՈՅ ՊԼՏՄՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՐԲՈՒՆՔԻ ԿԱՍ ԶԱՓԱՀԱՍՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Սիրոյ Աստուծոյն գալուստը : — Արբունքին
սօնոյքը (*) : — Երիտասարդ Քաճարուհիներուն
եւ Լուսնիօի սեւուհիներու սիրասունեւն եւ գա-
նոնք սիրային գաղտնեաց վարժեցնելու փերպե-
րը : — Երիտասարդ Աւստրալուհեաց արբունքն
ողջունելու համար նմաթօրինակ սօնեւն ու
ծեսերը : — Սերամին Ալֆուրուները :

Սիրոյ Եռախօսութեան կամ սիրոյ Ազգա-
բանութեան Հեղինակ Իտալացի Մանտեկաճ-
ժան կ'ըսէ. Մենք ժողովուրդք ամօթխած
եւ կեղծաւոր, որ սովորած ենք կարմիրը
վարտիքի մ'առջեւ, կամ քանի մը բառերու
առջեւ, զոր բառարաններուն խորը կը ծած-
կենք, չ'ունենք ո՛չ տօներ սիրոյ Աստուծոյն
գալուստն ողջունելու համար, ո՛չ ծէսեր,
արարողութիւններ՝ սէրը փառարանելու,
հանդիսաւոր կերպով հռչակելու համար :
Նոյն խակ յաճախ հայրն ու մայր կ'ողորտա-
նան թէ իրենց մանչը մարդ եղեր է, թէ
իրենց աղջիկը կին եղեր է : Լուսնաբարոսին
է միմիայն որ կը ծանօթանայ անոնց գաղտ-
նեացը, չարամտութեամբ մը կը ծիծաղի ա-
նոնց վրայ, եւ անոնց մանրամասնութիւն-
ները կը մեկնէ եւ կ'րացատրէ աննկատելոյն
կամ ընտանիքին խոհարարուհւոյն, եւ զի-
չերային առանձնախօսութիւնները ու միմի-
նրանցքները՝ ոճիրի մը պէս՝ կը ծածկեն
կենդանի ուժի մը ցոտցումը, որ կը փոխէ
եւ կ'կրկնապատկէ կեանքը :

Այս ամէկոտ զգուշաւորութեան մէջ ա-
մեն ինչ պախարակելի չէ : Բայց այսօր ո՛չ
մերկ քաղելու չափ վայրենի ենք, եւ ո՛չ ալ
մերկութիւնը խտեւալացնելու չափ տառաքինի :

(*) Է՞ր սօնախմբութիւն մեքրացալի բա-
ռին տեղ չի ներուի գործածել սօնոյքը, քա-
նի որ մեր նախնի մատենագիրք՝ աղետորո-
թիւն բառին տեղ ներուեր են գործածել
աղետոյք բառը, կամ սովորութիւն ի տեղ
սովորոյք : Յաճախ ակնմթի նախապաշարով
մ'եւ եթէ ներդաշնակութիւնը բառերու մէջ,
Սովորոյքը բնոյք կ'լինի :

Արբուներին ժամանումը չենք տօներ : Ընդհակառակն մեզմէ աւելի անհաւի՛ տգէտ շատ ժողովուրդներ արբուներին արշալոյսը կ'ողջունեն տօներով ու արարողութիւններով՝ որք շատ մեծ կարեւորութիւն ունին բաղ- դատական Հոգեբանութիւնը լաւ եւս ու- սումնասիրելու համար : Այս տեսակէտով պիտի քննենք արաբապէս Քաֆրուհներուն եւ Աստորալուհներուն սովորոյթքը :

Երբ դեռատի Քաֆրուհիք չափահաս են , կանայք իրենց շրջանակին մէջ կ'ընդունին արարողութիւններով , զոր նշոհող համաստ Միսիոնարը չուզեր նկարագրել այն տեղե- կագրին մէջ , զոր 1882ին Գերմանական Մաւ- դարանուրեան Ընկերութեան մատուց : Կը թաւականանայ յայտարարելով թէ՛ հոն իրենք լրբենի սանձարձակ անառակութեամբ կը պազլստին (մարմնական մղութեամբ խառ- նակիլ) :

Ըստ Ելիսէ Շէզլիւզի (Ֆրանսացի նշա- նաւոր աշխարհագիր) Զուլունբը , երբ իրենց աղջիկը վեց ամսու լինի , կը կտրեն , կը կտա- րեն , կ'հանեն ձեռքի մատներէն մէկուն , ա- լելի յաճախ ձախ մատնէ մատին վերջին ոս- կորը , եւ զայն կը թաղին նորածին կովու քակորին (թրիք) մէջ , անոր վրայ կտրուած մատին վերջին արունէն կը կաթկթեցնեն : Այս թրիքէ եւ արիւնէ շաղուած , զանգուած պազցամաթը կը դրուի հիւղեկին տանեաց վրայ :

Վայրենիներու մէկ քանի տեղեր՝ հայրը կը փրցնէ զեղեցկագոյն կովու մը ագիէն քանի մը ձար (կենդանի երկար մազ) , ո- րով մայրը կ'ընէ մանաւոր հիւսք մը , զոր կը կապէ տղուն ճիտը , եւ այս կովու մազէ հուսածը յաւուրթի (նուսխայ) տեղ կը ծա- ոայէ : Այս կովն այլ եւս նուիրական է , ո՛չ կը ծախուի , ո՛չ ալ կը փոխանակուի ո՛ր եւ է պատրուակաւ : Այս կովն այլեւս կը լինի քոյրն ու ընկերուհին ձեռատեալ մանկան , որուն կը հաղորդէ իր ոյժն ու առողջու- թիւնը :

Երբ դեռատի Քաֆրուհիները կին ըլլան , (այսինքն ամսականը տեսնեն) կ'ենթարկին սիրային գաղտնի խորհուրդներն հասկնալու համար տեսակ մը սովորական չարջարանաց :

Տան տիկին մը կը ժողվէ անոնցմէ մէկ քանինը , կը տանի գետը , կը տեղաւորէ զ'անոնք գետեզերքին կնիւններուն (սալ) եւ

եղէգներուն մէջ , Կը հսկէ անոնց մանկավար- ժութեանը , որ կ'տեսէ վեց չարաթէն մին- չեւ վեց ամիս . կը վարժեցնէ զ'անոնք առ- տնին աշխատանաց եւ իգական արհեստե- րուն , եւ ամենէն առաջ բահ դործածելուն ու փորելուն : Այս կրթութիւն ծեծելով եւ սոսկալի տանջանքներով կ'կատարուի : Հրա- հանգի ու մարդանքի այս ժամանակին մէջ , չեն կրնար կաթ խմել : Իրենց մարմինը ծած- կող հաղուստը կը հանեն , կը մերկանան , եւ զգեստի տեղ մսիկի ու ճերմակ կաւէ զանգուած չախաղով մը կը ծեփեն իրենց մարմնոյն մորթն ու միսն . իրենց ձեռքով կը հիւսեն կնիւնէ վերարկու մը , կը շինեն դը- դուրի կուտերէ մանեակ (կերտանլըխ) մը եւ գօտի մը , այն համոզմամբ որ դըդուրին կուտերուն չափ արդասաւոր՝ շատ ըլլայ եւ իրենց ծնունդը կամ ծնածները , Երբեմն եր- բեմն էրիկ մարդու պէս կը հագուին եւ այ- լանգակ ձեւեր , ծպտեալ կերպարանափո- խումներ կ'առնուն : Զեւքերնին կ'առնեն զէն- քեր , գուաղանիւր , կը խաղցնեն եւ հազար ու մէկ խենդութիւններ ի՛ գործ կը դնեն : Խոհեմութիւն է անոնցմէ հեռի կենալ այս յիմարութեանց օրերուն . զի կրնան ձեռք սպաննել առանց պատժուելու :

Աֆրիկացի այս նորասեւ Եւանները կ'սպա- սեն մեծ օձին այլելութեանը , որ դայ եւ խորհուրդին վերջին գաղտնիքն հաղորդէ եւ անոր վարժեցնէ զիրենք : Երբ մեծ օձն երեւի , արարողութիւնն ալ կ'աւարտի : Ալ անկէ վերջ կ'ածիլեն իրենց մարմնոյն բոլոր մաղերը , եւ իրենց աշակերտութեան այս վերջին գի- շերը կ'անցնեն գետափուռքի եղէգներուն մէջ երգելով , սուլելով , չչելով , յետոյ կ'վառեն մեծ կրակ մը , եւ իրենց կնիւնէ հագուստներն անոր մէջ կ'նետեն , կը ցաթկուտեն կրակին բոլորտիքը , ծախ ծեծելով : Ոտքերնին գետ- նին զարնելով :

Հետեւեալ առտուն կ'անուի կ'ըրգանան (լոյնան) գետին մէջ . կը լուան կ'մաքեն զի- րենք ծածկող սիկն ու տիղմը , կ'աւ կարմիր կ'ներկեն իրենց մարմինը , կ'օծուին (կ'քսուին) ճարպով (իչեալի) մը . որով փառ փառչալս կ'պսպլան ու կը վերադառնան իրենց գեղը ուր կ'ընդունուին մեծ հանդէսներով : Կ'ան- ուանեն իրենց մէկը մեծ թագուհի , որ ինքն ալ իր կողմանէ իրրեւ թագաւոր կընտրէ երկուստարդ մը , եւ միւս բոլոր ընկերուհի-

ներն ալ կ'ընտրեն իրենց համար մէյմէկ ասպետ (գաւալիէ)։ Ոչ ոք մնալու է մինակ. եւ եթէ գտնուի մէկը՝ ու չափազանց երկշոտ լինելուն համար չի կարենայ գաւալիէ մը ինքնիրենը փնտռել գտնել, հռչակով տանտիրիկններուն պարտքն է հատ մ'ալ այն անճարակին համար ճարել։

Այնուհետեւ ալ օրակարգին առաջին խընդիրն է զբօսնուլ. այն ալ սիրոյ օրհներգ մը է։ Եթէ այս զբօսանքից պահուն պատահում մը լինի. այսինքն գաւալիէն զ'ջարման խորած լինի. յանցաւոր, մեղանշող Ագաւին ծնողքը կ'ովեր կ'ընծայեն գեռատի ազնկան ընտանեացն եւ աղջկը ծախու կ'առնեն։ Հէրիք է որ չափազանց սուղ չըլլայ աղջկան գինը Իհարկին մանչուն ծնողքն աւրուած աղջկան ծնած տղան ծախու կ'առնեն, միայն թէ հայրական հաւը (մանչուն տէտէն) դժկամակութիւն չի ցըցընէ այս մասին։

Լօանկօի (որ հարաւային Աֆրիկայի արեւմտեան ծովեզերքը՝ Գօնկօի գետաբերնին մօտ երկիր մ'է), սեւամորթները, երբ աղջկի մը, դաշտանը (ամսականը) առաջին անգամ տեսեր է, կ'առնեն կը տանին զ'այն մասնաւոր խրճիթ մը, եւ մինչեւ ամուսին մը հոգացած օրը՝ նուիրական կոյս մ'է (նիւնսի կամ ձիւնսի)։ Այս բառը կ'ընշանակէ նաեւ հիմէնեան թաղանթ (գաւ)։ Այս խրճիթներէն ամեն մէկուն մէջ երեք աղջկի միայն կը սղմին, կը բնակին։ Աղջկանց ծնողքն իրենց զաւակաց հոգը կ'յանձնեն, կ'վստահին կնոջ մը, որ յարմար ժամանակին կը կրթէ զանոնք սիրային գործերու մէջ, Փոքրիկ զանգակի մը ձայնմեւ դրան փակուած կ'հասկնայ հետաքրքիրներուն (մասնաւորապէս զօրաւոր սեռին) թէ տունն անբռնարարելի է։ Ընդհակառակն՝ երբ զանգակը ձայն չի հաներ, եւ դուռը բաց է, կ'մտնեն կուսութեան սրբավայրը, խրախուճ ու նուագերգումներ ընելու համար։ Կուսանք կարմիր փոշուով կը չիւղին, եւ կ'օծուին արմաւենիի իւզով։

Կուսական այս խրճիթարգիլումը կը տեւէ առաւաւելն մինչեւ որ դաշտանի օրերն անցնին, բայց ծնողաց ուզելովը կամ գեռատի աղջկան փափաքելովը կրնայ աւելի շատ երկարիլ։ Խրճիթարգիլի օրն աւարտածին պէս, կոյսը կ'երթայ ծովուն կամ գետոյն եզերքը, կ'ըլացուի, յետոյ՝ հագուած ու չքուած, ընկերուհիքը զ'այն յաղթանակաւ տուն կը

բերեն։ Խաղեր կանչելով, պար ցատկելով (նուագ բարեփայլելու կերպով) կը տօնախմբեն կնոջ այս օծումը (կին եղած լինելու չափահասութիւնը)։

Բէքուէլ - Լօէքսա նշանաւոր գիտնական ուղեւորն անգամ մը տեսաւ խսիրի մը վրոն սիրոյ առաջին գիշերուան յոյժ պերճախօս մէկ ներկայացումը։

* * *

Աւստրիական բարբ ցեղերուն մէջ կ'մերժեն մարդ մը ամուսնացնել, եթէ այն չէ անցած գաղտնի խորհրդոյ արարողութենէ՝ որով ունէ Աւստրիացիացի՝ Մարի կ'օծուի կը հրաշակուի։ Այս խորհուրդը կատարելու համար երբեմն այնքան սառուիկ ու չարաչար տանջանքներով կը խոչտանգեն խեղճ մարդը, որ առողջութիւնը կամ կեանքը վրայ կուտայ, եւ Տաւսըն Անգլիացին կը հարցնէ ինքնիրեն, թէ այս վայրագ արարողութիւնը նոյն նպատակը չունի՞, զոր ունէր հին Սպարտական բաղանիքը, (Ասոր բացատրումն այլ անգամ)։ Պօլէն Անգլիացին որ Աւստրիական բարուց ու սովորութիւն վրայ ամենէն աւելի հին խօսող մատենագիրներէն է, 1789 ին նկարագրած, հրատարակած է Լօնտոնի մէջ այն արարողութիւնը, որ կ'տեւէ տասն եւ երկու ամիս։ Այս այտին եկամուտը (նորավարժը) Աւստրիացիէն ֆիլոսոֆի կը կոչուի։ Բայց վերի կողմի հեռանկարը (առջեւի աղաները, բառ նախնեաց՝ զոր Վենետիկի առձեռն բառարանը դրած է) չեն քաշեր հաներ՝ ինչպէս կ'ընեն ուրիշ ցեղեր։ Հեղինակը կը գոհանայ ըսելով թէ՝ նորավարժին մօրուքին բոլոր մաղերը կը փրցնեն, թէ ցելով խառն ջուր կ'խմեն, եւ յետոյ իրենց ցեղին կը յանձնեն։ Այս շրջանաւարտն իրեն կին ըլլալիք աղջկան քով կ'երթայ։ Կրնան իրարու երեսնայիլ, բայց չեն կրնար իրարու հետ խօսիլ։ Երբ երիտասարդին մօրուքին մաղերը վերստին կը բուսնին, աղջկին ալ հարսնցու՝ կարգուելիք տարիքը կ'մտնէ, օրիսըքն իր ցեղէն կ'բաժնուի եւ կեսրօջ կամ էրկանը ազգակոյններուն կը յանձնուի։

Պրուկ Սմիթ կ'ըսէ՝ թէ այրերու չափահասութեան արարողութիւնը խիստ գաղտնի կը պահուէր երբ վայրենի վիճակի մէջ էին, եւ գաղտնիքն յայտնողը մահաւամբ կը պատժուէր։ Սակայն այժմ Եւրոպացեացս հետ

ընտանեցած լինելուն համար թող կուտան որ ներկայ դառնալիք իրենց հանդէսներուն։ Աւստրալիոյ Վիգթորիա նահանգին մէջ այր հռչակուելու այս արարողութիւնն՝ որուն կ'ենթարկուին 14—15 տարեկան տղաքները՝ կը կոչուի բնիկներուն լեզուով դիպ-պիւդ։

Այս ցեղին մէջ մեծ ազդեցութեան տէր ամուսնացեալ մարդ մը կը կատարէ «դիպ-պիւդ»ը։ Կը վազէ տղուն վրայ, եւ ձիգ մը սեղմելով կ'սկսի սուր կայծքարի կտորով մը ածիլել մաղերը, քառորդ բթամատի մը չափ բարակ իւրնը մը կը ձգէ, որ ծոծրակէն մինչեւ ճակատն հասնի։ Կառով կը ծեփեն, կը ծածկեն գլխուն խուզուած մասը։ Օթօսուի (երկրին յատուկ սլարկաւոր երէի մը) մորթովը տարօրինակ զգեստ մը կը հագցնեն։ Կառնով, տիղմով, փոշիով, ածուխով կամ ուրիշ աղտիւրով (աղտոտութիւն) մը խառնուած շախաղով մը խոշոր խոշոր գծերով կը ներկեն, կ'նկարեն մարմնոյն մերկ մնացած մեծ մասը։ Թէեւ ձմեռն ալ պատահի, նորավարժը չի կրնար հագուստ հագնիլ։

Այսպէս ծիծաղելի եւ այլանդակ կերպով հագուած կ'երթայ թափառական բանակ դրած ցեղերու մէջէն, թեւին տակ կողով մը, որուն մէջ կ'ժողովէ կ'լեցնէ կարելի եղածին չափ աղտոտութիւնները զոր գտնէ, եւ շարունակ կը սրուայ, դիպ-պօ-պօ-պօ-պիւդ։ Ոչ ոք անոր հետ չի խօսիր, ոչ ալ անոր հետ խօսիւ վարուիլ կամ չեխել զայն։

Խրճիթէ մը մէկուն դուրս ելնելը տեսածին պէս՝ իսկոյն անոր կ'նետէ իր կողովին աղտոտութիւնները, բայց չի կրնար ոչ խըրճիթէ մը ներս մտնել, ոչ ալ ջուր բերող կնկան մը բան նետել։

Եւ մը օրերէն վերջ, որոց թիւն երբեմն կը փոփոխի, համեմատ այն պարագայից, զոր միմիայն հիները գիտեն, երբ մազերը կ'սկսին վերստին բուսիլ, կը յանձնեն զայն կնիկներու, որք զայն կը լողցնեն, կ'լուան, դէմքին վրայ սեւ գծեր կ'նկարեն, եւ կը կաքաւեն, պար բռնելով կը խաղան անոր առջեւ։ Այս վայրկեանէն սկսեալ՝ այլ եւս մարդ այր եղած է, ազատ է, եւ կ'ներուի երթալ դրացի ցեղերէն աղջիկ մ'առեալնգել (զողնալ) եւ իրեն կնիկ ընել։

Այս արարողութիւնն աւելի ծովեզերեայ Աֆրիկացոց մէջ գործածելի է, եւ գաղթականութեան միւս մասանց մէջ կը տարբերի, ինչպէս դիտած, ուսումնասիրած են Անգլիացի մարդաբան գիտունք եւ ընկերաբան ուղեւորք։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԵՒ

ԹԷ ԻՆՉ Է ԲՈՒՆ ՈՂՈՐՄԱԾԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Այս գիտութեան նկատմամբ՝ շատ մը սխալ ըմբռնումներ ունին այն մարդիկ՝ որք զայն լաւագոյն ճանաչելու էին։ Այս սխալներն յաճախ առաջ կուգան, առանց կարգացած ըլլալու՝ Գաղաքական տնտեսագիտութեան մէջ ամեն բան գիտնալ կարծելէն։ Ո՛չ մէկ ողջամիտ անձ չի գործեր դիմախօսելու սա սխալը՝ թէ ինչո՞ւ տարրագէտ մը՝ տարրագիտութեանը վրայ, աստեղագէտ մը՝ խաւարմանցը վրայ, կամ նոյն իսկ երկրաբան մը՝ ժայռերուն ու բրածոյիցը վրայ խօսեր է։

Բայց իւրաքանչիւր ոք, այս կամ այն կերպով, իր կարծիքը կուենայ գէշ հասկցուած վաճառականութեանը վրայ, վեր՝ սուղ գին վճարուած թռչուններուն վրայ, աշխատանքը վար կամ աման գնով վճարել տուող անիրաւութեան վրայ։ Այս մարդիկ չեն գիտեր թէ այս նիւթերը տարրագիտութենէն, աստեղագիտութենէն կամ երկրաբանութենէն աւելի դժուարին է իրապէս հասկնալը, եւ թէ ամբողջ կեանք մը ուսումնասիրում չ'օգտեր անոնց վրայ ստուգութեամբ խօսիլ կարենալու համար։ Եւ սակայն սովորաբար աւելի վստահութեամբ լեցուն խօսողներն անոնք են, որք երբեք ուսած չեն քաղաքական տնտեսագիտութիւնը։

Ճիշտ ինչպէս երբեմն կ'ատէին բնական գիտութիւնը, նոյնպէս եւ այսօր տգէտ կասկածանօք մը, նեղարտութեամբ մը կը խօսին քաղաքական տնտեսութեան գէ՛մ։ Մարդ կը սիրէ իր յատուկ գրգռմաներուն ու նախապաշարմանն հետեւիլ։ Բռնարարած, ճնշած կ'ըլլանք զինքն երբ իրեն ըսենք թէ՛ ինքը կ'ընէ ճիշդ այն բանը՝ որ զինքն իր փնտռածին բոլորովին հակառակ նպատակին պիտի առաջնորդէ։ Օրինակ առնենք ինֆլացիոյ ողորմածութեան պարագան։ Շատ գթաւիրտ մարդիկ կը մտածեն՝ թէ առաքինական գործ մ'է աղքատ մարդոց տալ ողորմութիւնը, զոր կը խնդրեն, առանց քննելու ազդեցութիւնը, զոր այդ ողորմութիւն պիտի ներ-

գործէ այդ մարդոց վրայ: Ողորմութիւնն ընդունող մութացկանին հաճոյքը կը տեսնեն, բայց չ'են տեսներ անոր վերջին արդիւնքը, այսինքն մութացկաններու թուոյն յաւելումը: Մեր աչքին առջեւ տեսնուած աղքատութիւնն ու ոճիրները մեծաւ մասամբ անցեալին գէշ հասկացում ողորմածասիրութեան արդիւնքն են, ողորմածասիրութիւն՝ որ ժողովրդէն բազմութիւ մասի մ'անհագ, աննախատես եւ ծոյլ լինելուն պատճառ եղաւ: Բաղաքական Տնտեսագիտութիւնը կ'ապացուցանէ թէ դիպումածական ու անխորհուրդ ողորմութեան տեղ, աւելի լուազոյն գործ մ'ըրած կրլանք. երբ ջանանք ժողովուրդին կրթութեանն հոգ տանել, անոր աշխատիլ սորունցնել, օրուան ապրուստը ճարել եւ խնայողութիւն ընելով վառատակէն բան մը պահել իր ծերութեանը ատեն՝ իրեն օգուտ՝ ու օգնութիւն մ'ըլլալու համար:

Եթէ մէկն իր ծուլութեան եւ աննախատեսութեան մէջ յարատեւէ, հարկաւ սխտի կրէ անոր հետեւանաց դառնութիւնն ու տառապանքը, բայց որովհետեւ գործելու այս կերպը կրնայ խիստ երեւիլ, անտեսադէտք դատապարտելի կը համարուին զգայուն ոչ վատթարացած սրտի տէր մարդոց կողմանէ: Գիտութիւնն այս կերպով մտածելուն համար անողք ու անդուլ կը սեպեն եւ կը հետեւցնեն, թէ գիտութիւնն ուրիշ առարկայ չունի բայց միայն հարուստն աւելի հարուստ ընել. եւ թողլու որ աղքատը ոչնչանայ իւր չքաւորութեան մէջ:

Այս ամենը սխալանք միայն է:

Տնտեսագիտութիւնն՝ երբ կը փնտռէ թէ մարդն ինչպէս կրնայ աւելի զիւրութեամբ ստացուածքի ու ընչից տէր լինելով հարստանալ, չի սորունցնէր ընաւ թէ հարուստը՝ ազահի մը պէս, իր ունեցածը կծիկ ընելով պահելու է. ոչ ալ զեղխ անառտիկն պէս, չապլ յիմարութիւններով վատնելու է: Գիտութեան մէջ չի կայ բացարձակօրէն բան մը տարհամուկելու համար հարուստը՝ իր հարստութիւնը միանգամայն վեհանձն ու իմաստուն կերպով ծախսելու մասին: Կրնայ խոհեմութեամբ իր ծնողացն ու բարեկամացը օգնել: Կրնայ հիմնել օգտակար հաստատութիւններ. ինչպէս մատենադարաններ, թանգարաններ (musé.), հասարակաց դրօսավայր. պարտէզներ, հիւանդանոցներ, ու

նպաստաւորել ժողովրդին դատարարութիւնը կամ հաստատել բարձրագոյն կրթութեան շէնքեր, կրնայ միութարեւ այնպիսիներ՝ որք կը տառապին դժբախտութիւններէ, որոց կանխաւ առջեւն առնելու անկարող գտնուած են: Անկար հիւանդները, կոյրերը եւ թուր անոնք, որք իրենք իրենց օգնելու թոյրովին անկարող են, բնականաբար հարուստն ողորմածասիրութեանն արժանաւոր են: Տնտեսագէտին թուր ուզածը սա է թէ՝ « ողորմածասիրութիւնը ճշմարտապէս ողորմածասիրութիւն ըլլայ », եւ օգնել ուզածներուն անիրաւութիւն չըլլայ: Տխուր է մտածել թէ՝ մինչեւ այսօր շատ չարիք եղած է անոնցմէն, որք միայն բարիքը կուզէին:

Ոչ նուազ տխուր բան է միանգամայն տեսնել հաղարաւոր մարդիկ՝ որք կը փորձեն բարւոքել, բարեւտել իրենց զիրքն այնպիսի միջոցներով, որք ճիշդ հակառակ արդիւնքն արտադրած են. գործադուլներով, մեքենաներու գործածութեան գէժ հակառակելով, հարստութեան արտադրութիւնը նուազեցնելու սեղմումներով: Այնպէս որք կամ գործաւորք իրենք իրենց յատուկ քաղաքական տնտեսագիտութիւն մը չինած են, կ'ուզեն հարուստ ըլլալ ճիշդ թափելով՝ որ աւելի շատ հարստութիւն չարտադրեն: Կը տեսնեն իրենց ըրածին արդիւնքը, բայց ոչ վերջնական հետեւանքի:

Նոյն բանը կը տեսնենք նաեւ ազատ փոխանակութեան (libre échange) խնդրոյն մէջ: Անգլիոյ մէջ՝ կ'ըսէ Անգլիացի Տնտեսագէտը՝ վերջապէս վաճառականութիւնն ազատ թողելու իմաստութիւնն ունեցանք: Ուրիշ երկիրներու մէջ, եւ մինչեւ իսկ Աւստրալիական գաղթականութեանց (Անգլիական ստացումը) մէջ, կան օրէնքներ՝ որք կարգելուն ուրիշ երկիրներու առաջ բերքերէն օգտուել: Շատեր կան այն կարգի մարդերէն, որք կը մերթեն ընդունիլ սա ճամարտութիւնը թէ՝ հարստութիւնը կ'աւելնայ երբ այն կ'արտադրուի հոն, ուր մարդ աւելի զիւրութեամբ եւ աւելի առատութեամբ կրնայ արտադրել զայն: Վաճառականութեան ամեն մէկ հրապարակ, ամեն մէկ քաղաք, իւրաքանչիւր ուղի հայթայթելու է ինչ որ լուազոյն կերպով կը ծախուի, եւ ուրիշ արտադրութիւնքն ալ գնուելու են այն տեղերուն մէջ, ուր կըրնայ նաեւ զոնոնք ամենէն աւելի զիւրութեամբ գտնել, ճարել:

Քաղաքական Տնտեսագիտութիւնը մեզ կը սորուեցնէ մեր ամեն մէկ ըրած անմիջական գործէն անդին՝ հեռուն նկատել, եւ փնտռել շահն ամեն հասարակութենէ եւ նոյն իսկ ամբողջ բոլոր մարդկութենէն. Անգլիան իւր ներկայ առեւտրական բարդաւաճանքը մեծաւ մասամբ կը պարտի այն գիտութեան զոր Աւամ Սմիթ աշխարհին աւանդեց, իր «Ազգաց հարստութիւն» անուն գրքին մէջ: Ան սորուեցուց ազատ աշխատանքին, ազատ վաճառականութեան արժէքը. եւ այսօր, այս մեծ գրքին հրատարակումէն հարիւր տարի վերջը՝ գտնուելու չէին իւր դասերուն պարտեղն հակառակող այնքան հասկցումէ զուրկ մարդիկ:

Ստոյգ է որ երբ ժողովուրդը չի հասկնայ ճշմարիտ ֆաղափախ սնտեսագիտութիւն մը, որիչ սոս ու սխալ հաս մը կ'շինե ինքն իր ուղած ձեւով:

Անոր համար՝ տիրական հարկ է որ ամեն ոք, այս թէ կին, չի կրթուի առանց մեր այս սորուելիք գիտութեան վրայ գաղափար մ'ունենալու:

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՍՈՅՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Սկիւնք հաստատել այն կարգն՝ որոյ համեմատ քաղաքական տնտեսագիտութեան մէն մի բաժանումը կամ ճիւղը պիտի բացատրուի համառոտակիւ: Առաջին անգամ մեր գիտնալիք զիտաւոր բանն այն է թէ՛ յոբուս կը կայանայ հարստութիւնը՝ որ այս զիտութեան առարկան է: Երկրորդաբար՝ պիտի փնտռենք թէ՛ ինչպէս կը գործածեն հարստութիւնը, կամ զայն ինչպէս կ'սպառեն, պիտի տեսնենք թէ՛ հարստութիւն չի սեպուիր եւ ոչ մէկ բան որ չի կրնար բանի մը գործածուիլ: Եւ հարստութիւնն ունենելէ առաջ՝ զիտաւոր ենք թէ՛ ինչ բանի գործածելու ենք: Երրորդաբար՝ պիտի քննենք թէ հարստութիւնն ինչպէս կ'արտադրի, ինչպէս կ'ոյսացած է: Չորրորդաբար՝ զ'այն արտադրելն վերջը՝ ինչպէս կը բաժնուի այն այլ եւ այլ դաս մարդաց մէջ, որք հարստութիւնը արտադրելուն օգնած են:

Համառոտակի՝ կրնանք ըսել թէ Քաղաքական Տնտեսագիտութիւնը կը խօսի 1⁰. Հարստութեան ընտելեանք. 2⁰. Անոր սպառմանը. 3⁰. Արտադրութեանը. 4⁰. Բաշխմանը վրայ:

Տուրք (impôt) երուն վրայ սլ քանի մը խօսք ընեն հարկ է, պէտք է որ իւրաքանչիւր երկրի հարստութեան մէկ մասն հաւաքուի, Տէրութեան կողմանէ: Ազգին պաշտպանութեան եւ կառավարութեան ծախքերը վճարելու նպատակով: Բաշխման զխոյն մէջ հասանականօրէն կրնան զետեղուիլ տուրքերը:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային առաջնակարգ սեղանաւոր թաշեհան Ազնուաշուք Սարգիս Էֆէնտիի Դուստրն Օրբորդ Արմէնուհի՝ որ Հայոց կրթեալ գեղեցիկ սեռին փայլերէն մին է՝ ամուսնացաւ Ազգային ծանօթ տպարանապետ Սէրվիշէն Էֆէնտիին հետ: Կը մաղթենք անփուշ ու անթառամ պսակ, եւ խաղաղ ու երջանիկ ապագայ:

— Ազգային Մամուլն և Հայ հասարակութիւնը ցաւ աղին տիրանօք մ'համակեցաւ, երբ յանկարծ լսեց Տատեան Բարձր. Արթին փաշայի վեհայ՝ Վեհմ. Տոգտոր Հ. Էֆէնտի նազաշիանի շոյգ մը հրեշտակատիպ դատրիկներուն՝ Արթին փաշային ալ՝ աչքի լուսի չափ սիրելի՝ այդ ջուխտ մը թողնեկուհեաց՝ Շուշանիկին և Անտոյիին մահերը՝ կարմրախոնէն, բաժնելով ապա Վեհմ. Տոգտոր և Տիկին Հ. նազաշեանի և Տատեան գերդատառնին սոյն տարածամ կսկիծը. կ'մաղթենք երկնային մխիթարութիւն, որով միայն կարելի է ընուլ այն պարագայ՝ զոր զաւակաց մահն ու գերեզման կ'պեղեն ու յախտեան բաց կը ձգեն ծնողաց՝ մանաւանդ որքտաւարդ ու բարձրադոյն կրթութեամբ մշտեալ գիւրազգած ծնողաց՝ սրտերուն մէջ:

— Եւ ո՞ր զգայուն սիրտ անցեալները չ'զգեցաւ սուգ գառնակովիծ, երբ Ազգ. լրագիրք գումեցին վաղեմի Ն. Շահնազարեան վարժարանի նշանաւոր անակերտին՝ և Ղալազիոյ Միջազգային Թղթաւ տարատան գնահատեալ պաշտօնավա-

րին՝ Ազն. Առաքելեան Տիգրան էֆէնտին երեքուստանամեայ Օլ. Մարիամին մահն անողոր : Աւաղ այն ժպտուն յոյերուն, այն փայլուն իղձերուն, զոր տասներեք վարդազոյն տարիներ Տիար Տիգրան և Տիկին Թագուհի Առաքելեանի հազար ու մէկ գգուանօքն ու գուրգուրանօք, Ծնողական բիւր խանդաղատալիր հոգերովն ու ինամօքը ծաղկեցուցած էին այս չնաչխարհիկ Արմենուհւոյն գեղանահ ճակտին վերայ : Փշնց մահուան դժոխաշունչ սիւնունը, եւ մէկ ականթարթի մէջ թառամեցուց ամենքը : Մեր դըպրոցակից ընկերին և սիրելի բարեկամին այս դառն կորուստն հասարակաց ու Մամուլայօքն արտասուելով՝ կ'մաղթենք համբերութիւն նահապետի և սիրտա՛ք Քրիստոնեայ իմաստասիրի :

— Կ'ցաւինք որ Ազգային պաշտօնական չըջանալաց մէջ՝ իրենց անցեալ արդիւնաւոր ու պատուաւոր գործունէութեամբքն հանրածանօթ թէ՛ անցեալները՝ Տիրան էֆէնտի նաղարեան և թէ՛ այս օրերս Պօղոս էֆէնտի էքսէրճեան, հրաժարական տուին նոր օրերու Ազգ. պաշտօնավարումէն, ու այնքան պէտք ունի անցելոյն փորձառութեամբք հմտացած Աջնուաշուք Տեսրց Տիրան նաղարեանի և Պօղոս էքսէրճեանի նման առեւտրական ու սեղանաւորական անկախ հրապարակի ծանօթ գործօն ու զգօն Ազգայնոց :

— Ամեն . Ս . Պատրիարք Հայրն անցեալները, Ազգ. Հիւանդանոցի Որբատունն այցելեց . միգերով, շաքարեղէնով և շաքարքերան խօսքերովն ալ մխիթարելէ յետոյ Ազգին Որդերը, 20 Օսմանեան սակի դպրոցին և 2—3 սակիներ ալ դըպրոցի Պաշտօնէից նախկեց : Նորին Ամենապատուութեան տոյն ինկաւէտ առատածեռնութիւն Ընդհ. Ազգին գոհութեան արժանի է :

— Մեր Ամենաշնորհ Պատրիարք Ս .

Հօր քաջալերական ու մխիթարական օրինակին հետեւելու են և մեր թէ արդքաշուած Ամենաշնորհ, թէ Բարձրաշնորհ, թէ Գերաշնորհ, թէ Արժանաշնորհ Ս . Հաղք, գործնապէս ապացուցանելու և իրենց հետ Ազգայիններն ալ գործով համուելու համար, թէ Ազգին Տունն ու Որբերը՝ Ս . Պատրիարք Հօր նման՝ այցելութեամբք մխիթարելով և եթ Ազգին ճշմարիտ Հոգեւոր Հայրերը կը լինին :

— Տեղն է աստ լիաշուրթն գովեստիւք Ընդ . Ազգին կողմանէ շնորհակալութիւն յայտնել այն պարկեշտ ու ազգասէր քահանային՝ Արժ. Տէր Խաչատուր Տ. Գաբրիէլեան Հօր, որ, ինքնայորդոր մեղուաշանութեամբ, ամեն աւարի լիարուստ գրամներ ու նուէրներ հաւաքելով ազգին ամէն կարգի ու սեռի անհատներէն Ազգին տունն ու անոր անկար ու անաէրունչ պատուարեալները կ'մխիթարէ : Ահա Ազգին ու Եկեղեցւոյն ճշմարիտ Քահանայ Հայրը, Որ Տնօրհնէք կը պատի իր տունէն աւելի Ազգին տունը հոգալու համար :

— Յոյժ մխիթարական է տեսնել մեր Կաթօլիկ եւ Բողոքական եղբայրները, Լատինական ու Լուտերական մարդասէր Հայերն, Քարողիչներն ու Քարողուհիները . Դիմութեան Քոյրերն ու Մարապետները, որք թէ Մայրաքաղաքին և թէ նահանգաց մէջ, Ազգային ծանօթ տագնապին հետեւանօք արկած եալներն ու կարօտեալները կը մխիթարեն ո՛չ միայն դըրամով, հացով, հագուստով և ամեն տեսակ ապրեղէններով : Այլ նաեւ մարդասէր Մխիտարք՝ Հայոց դպրոցադուրկ, ծնողադուրկ մանկանց համար, վարժարաններ, գործատուններ ու պատուարաններ կը հիմնեն : Թէեւ Խարբերդի մեր «Խիղճ» թղթակիցն՝ այս Յունվար ամսաթուով գրած էր թէ՛ խումբ մը Հայ որբ տղաքներ՝ գաւառին հեռաւոր գիւղերէն ձմրան սաստիկ ցուրտն ու ձիւնն աչքերնին ա-

ուած՝ սառելու աստիճան, դիմած են Խարբերդ օգնութիւն խնդրել Միսիոնարներէն, որոցմէ անտարբեր կերպով մերժուած՝ ու փողոցէ փողոց բոկոսն մուրացիկ չըլեր՝ և գիշերայն ալ՝ ձմեռն սաստիկ ցուրտին տակ՝ անպատասպար՝ փողոցը մնացեր են։ Մեր թղթակիցն՝ ըստ գիւպաց, պատահելով այս Ղազարիկներուն, կ'հասկնայ անոնց սրտածմբիկ պատրանքն և իւր տունը կ'հիւրընկալէ։ Սակայն ազգային թերթերն արդէն իմացուցին թէ՝ Խարբերդի Միսիոնարք Հայ որբոց համար գիշերօթիկ դպրոց բացեր են, ուր անշուշտ ց'արդ՝ ճանչցուած ու պատուարուած պիտի լինին այդօրինակ լքեալ որբերը։

— Հայոց Ընդհ. Հայրապետն էջմիածնայ Վեհարանէն Արքիքեան(*) աստիճան չնորհեր, յղեր է Պոլսոյ մեր Ս. Պատրիարք Հօր։ Սոյն Արքիքեան հետ լաւ եւս էր որ՝ մեր Հայրապետը Էջմիածնայ ուտիճ ու ցեց չի դպած գանձէն ալ քանի մը քսակ ոսկիներ զրկեր Հայ կարօտելոց։

— Գերերջանիկ Ազարեան Սրբազան երկիցս այցելեց Բ. Դուռն, և հեղ մ'ալ ի՛ Պէշիկթաշ, Տատեանց Ապարանքը, Բարձր Արթին Փաշային, Հիւանդոտնի համար։

— Նորին Սրբազնութիւնն ինքն անձամբ Խառգիւղ դիմելով հսկեց ու բաշխեց բազմաթիւ Հայ կարօտելոց կաթողիկեայց կողմանէ մատուցուած ողորմածասիրական պարենեղէնքը, նպարեղէնքն ու դրամեղէնքն, որոց հետ եւ հոգեւորապէս մխիթարեց ու քաջալերեց Հայ կարօտեալները, Գերերջանիկ Ազարեան Ս. ի սոյն գործն ամեն կարգի ու կողմի Հայոց գոհութեանն ու գովեստին արժանացած է։

(*) Աւելի լաւ է որ Արք-Եպիսկոպոս ըսելու տեղ, ըսենք՝ Մայրապոյն Եպիսկոպոս, ինչպէս կ'ըսենք Մայրապոյն Վարդապետ եւ Մայրապոյն Պատրիարք։ Յոյն «Արխ»ը, թող Հայանայ «Մայրապոյն»ով։

— Անհովիւ Գաւառաց Հովուապետ որոշող Յանձնաժողովոյն տեղեկագիրն յոյժ շահեկան ու իմաստուն գործ մ'է։ Լաւ եւս կ'լինէր եթէ Հովուապետցու կամ թեմավար կուսակրօնաց հետ ընտրելի առաջարկութիւն եւ ամուսնացեալ կրօնականաց դասէն՝ Տէր Մկրեան, Ճիզմեճեան Տէր Արիստակէս, Տ. Գաբրիէլեան Տէր Խաչատուր, եւ անոնց նման ժողովուրդ հովուելու մէջ վարչական ու գործնական փորձեր ցցուցած ուրիշ քանի մը քահանայ հայրեր ալ, մանաւանդ այսպիսի ատեններու մէջ, ուր ժողովուրդը շատ տեղ աւելի պիտի օգտի ամուսնացեալ կրօնականէն։ Ինչպէս Ադրիանապոլսեցի Հայք կ'օգտին այսօր Առաջնորդի փոխանորդ Տէր Արսէն քահանայէն, որ Գեր. Մեարոպ Ս. Հօր խնամոտ ձեռաց տակ ժողովուրդն Հովուել սերտած է։

— Առաջնորդընտիր Յանձնաժողով. Ազգ. վարչութեան հետ միանալով լաւագոյն գործ մ'ըրած կ'լինէր, եթէ ստիպէր ու համոզէր որ մէն մի անպաշտօն Եպիսկոպոս վրան ձեռնադրուած վիճակը վերադարձնէր։ Եպիսկոպոս մը որ՝ վիճակին վրայ ձեռնադրուի, նոյն վիճակին ու եկեղեցւոյն հետ հոգեւորապէս պսակեալ լինէ։ Եթէ մարմնաւոր պսակներու լուծումը կամ թողութիւն չենք ներեր. է՛ր ներենք հոգեւոր թողութիւնը։ Կրօնականք Ազգին Առաջնորդող դասն ըլլալով բաց աչօք առաջնորդելու են մեզ, սր ամեն խորխորատէ փրկեն ժողովուրդը։

— Ազգ. լրագիրք ծանուցին թէ՝ նորէն մէկ քանի տասնեակ վարդապետցուներ պիտի յղուին Դպրեվանքը, որ ծախուց նոր բեռ մը պիտի դնէ Ազգին կռնակը՝ որ արդէն ծախուց տակ հոգեվար կը հեւայ։ Ազգ. վարչութիւնը միանգամընդ միշտ վարդապետ հասցնելու իբր յարմար վանք՝ ընտրելու է Երուսաղեմաց Հայոց Ս. Յակոբ Վանքը։ Ազգն ասկէ աւելի ոչ

յարմար ոչ կանոնաւոր վանական հաստատութիւն ունի, եւ ոչ կարող է ունենալ։ Ուրիշ վանքերու մէջ վարդապետ հասցենելու համար լինելիք ծախքն յանձնելու է երուսաղեմայ Հայոց Վանքին, ուր միայն կրնայ Ազգը կարգապահ եւ ժողովուրդ հովուելու յարմարագոյն վարդապետներ հասցնել։ Փորձն ալ յայտնի է, այսօր Ազգին բոլոր կարող կրօնականք ու առաջնորդք երուսաղեմայ միաբաններն են, Տ. Մեղիսեդեկ Մուրատեան, Տ. Հմայեակ Դիմաքսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Հանդուցեալ Կաթողիկոսն եւ այլ շատեր, ինչպէս վերջերս Տիարպէրիւի եւ Ուրֆաի առաջնորդ վարդապետները, որոց մասին Պօլսոյ լրագիրք եւ Գաւառին թղթակիցք մեծ գովեստիւք կը խօսին։ Իբրեւ լոկ զրազէ՛ս փայլիլ փափաքող վարդապետներէն աւելի, վարչագէ՛ս Վարդապետներու պէտք ունինք, այսօր աւելի քան երբէք, որք՝ գրչին հետ գիտնան չարժեք եւ գաւաղանն, ու իրենց հօտը փարախէն չուծացնել։ Արգարեւ ամեն վարդապետ՝ գրագէտ է, զի, երեկոյ թէ առաւօտ, Գրքերու Դիրքն է զոր կը կարդան եւ գրեւորու գիրն է իրենց առգելիքը։

— Այժմ առաւել քան երբէք մեր կուսակրօն կղերականները Մամլոյն մէջ ու Հանրութեան առջեւ քաջալերականով արտապնդելու ենք։ որ՝ իրենք ալ «Քաջ Հովու ինչպէս աւելի գօտեպնդին, քան թէ աւելորդ քննադատականներով զանոնք խոցոտենք ու լքանենք, ընդհանուր խոցոտումի ու լքումի սոյն տաղանդալին մէջ։


Անցեալ օր Տոգտոր Ա. Գարագաշ Վիէննաի կեանքէն առնուած միջապատումի մ'առթիւ՝ «Լուսթիւնն ոսկի է», կը գրէր։ Այսօր ալ մեր կարող ու արժանաւոր կրօնականաց նկատմամբ քննադատականներու լուսթիւնն իրօք ոսկի է։

Այսօր համայն աշխարհի մէջ՝ մարդասիրական մեծ գործերն բարեկրթական

հաստատութիւնքն ու մեծագոյն հանճարները կուսակրօնաց եւ կուսակրօնուհեաց կ'արարինք։ Քրիստոնէութիւնն անօնց պէտքն զգացեր, հաստատուի է եւ դարեր նուիրագործած են անօնց կարգերը, որ գրեթէ հաւատոյ մասանց պէս, այլ եւ, նուիրական, անհրաժեշտ, անբռնարարելի է անօնց դոյութիւնը։ Չանունը Ազգովին զ'Այնս ժողովրդին օգտին աւելի համապատասխան ու նպաստաւոր վիճակներու ու դիրքերու մէջ դնել ու աւելի աշնուացնել, եւ աւելի շահագործել զ'անօնք, Մեր կուսակրօն Հարք պահած են մեր Ազգը, մեր կրօնքն ու մեր դրականութիւնը։

Իր կոչմանն ու պաշտօնին անարժան ու անճարակը՝ լիւի կրօնական թէ աշխարհական, արդէն արհամարելի ու մերժելի է։ Յարգենք մեր Կրօնականները։

— Ճէրիաէի Շարգիէի Տէրն ու Տնօրէն Ճիվէլէկեան Տիգրան Էֆէնտիի Մայրն Տիկին Գայիանէ՝ 80 ամենի հասակին մէջ՝ հանդեաւ ի՛ Տէր, հակառակ այնքան բժշկական դարմաններու։ Մեր Պառուարժան եւ դիւրագգած Պաշտօնակցին կը մաղթենք Երկնային միսթարութիւն եւ Աւետարանական համբերութիւն։ Երանի՛ Մօրն՝ Որոյ նշխարքն իւր գաւաղաց արցունքին կարօտը չի քաշէցին։



Շ Ն Ո Ր Հ Ա Ն Ա Ն Ի Ք

Առ Արեւելեան Մամուլն Զմիւռնաի

Որ ողջունեց «Հանրագիտակ»ի Ծնունդն իւր գուրգուրալի եւ խրախուսալի բացատրութեամբ։ Մի օր, ազուարտոյն, բիւրասիրտն ու բիւրամիտն Գրասէր—Ատու՛ (Եղիա Տէմիրճիպաշեան) հրապարակողորած էր թէ՛ Մ. Մամուրեան՝ Հայ Մամուլն վահագետն է, եւ Բիւզանդիոնի Հայ Մամուլն Բիւզանդացի Բիւզանդայ Բիւզանդիոնին հանճարեղ Տէրն ու Տնօրէնն՝ Տիար Բ. Քէշեան Հսկայ Հանճար կոչած էր Հոմերի Հայրենակից Քաղաքացին (Տիար Մ. Մամուրեան)։ Ինչպէս եւ

Ռուսահայ Մամուլն ու Հայ Գրականութեան
Նահապետն անուանած էր Արեւելեան Մամ-
լըն Տէր — Խմբագիրը։ Տիրա Մամուլեան
Հեղինակութիւն մ'է, եւ պիտի մնայ ցոյց-
չափ տարի արդի Հայերէնն՝ Ոյր Ոսկերեան
Հայրապետն է։ Հետեւաբար՝ իւր գնահա-
տումն՝ մեզ համար՝ թէ՛ քաջալիւ է եւ թէ՛
յոյժ պատուաբեր։ Սակայն Մամուլեան է-
փնտին տխուր է։ Հանրային մեծ Մարդոց
ներքին կենաց մանրամասնութիւնքն հանրա-
յին հետաքրքրութեան արժանի են։ Ի վերջ
յունվար 30 ամսութիւ նամակին մէջ կը զրէ
Մամուլեան էֆ. « Բարեկամ. տխուր ու
տրտում կ'անցնին մեր օրերը. Սիրելի Վահէս
տակալին կ'տառապի։ Ա՛խ, ո՛րքոն ցաւ կը զ-
գամ երբ կ'բաղդատեմ իր առջի կայտառ
ու կորովի վիճակն այժմեանին հետ. թէ եւ
բարեւոյն կայ, այլ զեւ նիհար է։ Անհամբեր
կ'սպասեմ ամրան, որ զիւզը տանիմ զուտ
ու մաքուր օդ ծծելու, իր անձնածիր, զորո-
վայի հիւանդպահն է Մայրն։ Ո՛րքոն կ'հալի
ու կ'մաշի խեղճն։ Երեւակայեցէք թէ՛ այս
ընտանեկան վիշտերու մէջ, ի՛նչպէս ծանր
բեռ մ'է ինձ զրական աշխատութիւնն. սիրտ
ու հոգի չէ մնացած վրաս, զրիչն ստեպ
ձեռքէս կ'թռի. եւ խոր թախծութեան մէջ
կ'ընկղմիմ »։

Հանրագիտակ կ'շնորհաւորէ բոլոր Հայոց
հետ, Վսեմ Զարեհ Էֆէնտի Տիւլեր, Իւլաի
բարձր աստիճանովը Վիհ. Կայսեր կազմանէ
պատուեալ լինելուն համար։

Նորին վսեմութիւնը՝ որ Ազգ. Վարչութեան
եւ թէ Բարեկարգութեանց (Սըհաթ) Ժողո-
վոյն անդամ է. ինքն բնիկ Զմիւռնացի նշա-
նաւոր Գերդաստանի մը զաւակ, Եւրոպական
բարձր կրթութիւն առած բազմալեզուեան ու
Ազգասէր եւ նշանաւոր Հայ մ'է։

Իւր եղբայրն ու հանգուցեալ Պողոս Էֆ.
Տիւլէր՝ Զմիւռնաի Երեսփոխան՝ էր Ազգ.
Ժողովոյն մէջ, եւ Րէթի թարգմանչաց սենե-
կին Պետն էր, նմանապէս Ազգային ու Պե-
տական բարձր պաշտօններ վարած՝ թէ Ազ-
գին թէ Պետութեան եւ թէ իրենց բնիկ Հայ-
րենեաց Զմիւռնաի պատուաբեր եւ օգտամա-
տոյց հանդիսացած են։ Կ'շնորհաւորենք Վսեմ
Տիւլէր Զարեհ Էֆէնտին։

Աւագային Փաստորաններէն Կետարացի
Յարութիւն Էֆէնտի Գայսերեան՝ որ իւր ա-
մեն կարգի յաճախողները գոհացուցած է,
իւր ազգասիրական ոգին ցուցնելու համար,
Ազգ. Հիւանդանոցի ի՛նչպատ Հոսթաթաբեր
հրատարակութիւն մ'ընել առաջարկած է
ձէրիտիէ Շարգիլի մէջ։

Կ'մաղթենք որ մեր համակրելի Հայրենա-
սէր (փաստարան) բարեկամին ծրագիրն ըն-
դունուի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Միակ կարեւորագոյն քաղաքական
խնդիրն՝ որ դահլիճէ ի դահլիճ գիւղայե-
տները, եւ Ռստանէ Ռստան Վեհապետները
կ'յուզէ. որ զօրանոցներն ու զինանոցները
կը խուլէ, որ Տերութեանց տորմիղներն
ի՛ծով ի վաշտերն ի՛ ցամաք կ'տարտղնէ, որ
համաշխարհային մամուլը կ'ղրապեցնէ եւ
ընթերցողաց հետաքրքրութիւնը միշտ ի-
րեն ծառաւի կը պահէ, Կրետական խն-
դիրն է եւ Հելլենաց ոտնձգութիւնը Մի-
նոսի հայրենիքին եւ Դիոսի Որտնին մէջ։

Սակայն Հեռագիրք ու Լրագիրք ար-
դէն ծանուցին թէ՛ մեծ Տէրութիւնը լիա-
կատար համաձայնութեամբ եւ սպառա-
զէն միջամտութեամբ սրոշեր ու հրամայեր
են որ՝ Հելլենը Կրետէէն իսպառ քաշեն
իրենց ձեռքն ու ոտքը, թէ իրենք պիտի
խաղաղեն ու բարեկարգեն Օսմանեան կա-
ռավարութեան հետ համախոհութեամբ՝
խուսփութիւնն ու խռովման պայծառ ե-
ղած բաները՝ թէ Թուրքիոյ ամբողջութե-
նէն չի պիտի անջատեն (զատեն), Կրետէն։

Տէրութիւնը, յայտարարեր են միան-
գամայն թէ՛ ո՛չ միայն քաղաքական վեր-
դովը Կրետէէն դուրս չիպիտի տարածեն,
այլ եւ պիտի զսպեն Հելլենաց ռազմա-
շունչ ձկտումները, բացարձակօրէն պիտի
արգելուն Հելլադաի եւ Թուրքիոյ ընդ-
մէջ ո՛ր եւ է պատահական ընդհարում,
այլ եւ չի պիտի թողուն ո՛ր եւ է Ժողո-
վուրդի կամ Տէրութեան, որ Կրետէի

ՁԵՆՈՅՑ

Անդրակամը՝ Բերայի, և Վոսթորի մեր բաժանողաց համար՝ Դ^ո թիւէն սկսեալ ցրուիչ կարգաւած Յարդոյ նախնան Մարգար Աղան՝ մօտ տասն եւ մէկ օր է մեզ չէ հանգիւղած՝ հիւանդ եմ ըսելով, և սակայն իբրեւ առողջ դուրս ելնել պատիլը տեսնուած է։ Կ'ինդրուի Բերայի Արմ. Տէր Հայրերէն եւ մեր բարեկամներէն՝ որք հաճին իմացնել իրեն անմիջապէս դալ եւ տեսնել մեզ, կամ իրեն ազգական ու ծանօթ մէկու մը միջոցաւ յղել մեզ՝ գանձուիլն իրեն յանձնուած բաժանորդութիւն, որք «Հանրագիտակ»ի և ամեն թերթի Պիւսճէին մէջ իրենց օրական կարեւորագոյն տեղն ունին։

«Հանրագիտակ»ի Խմբագրութիւնը Մարգար Աղայի անձնական վստահութեան մասին՝ առանց դեռ խախտած ըլլալու իւր լիազատքը, կ'ինդրէ որ կամ մեր տունը, կամ մեր ծագղարանը՝ պարտ ու պատկան բացատրութիւնը՝ իր ԱՂ օրեայ բացակայութեան առթիւ չի տուած, Պատուարժան բաժանողներէ ու է գանձում ընել չի բարեհաճի։

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»ի ուղղուած բազմաթիւ նամակներէն, այցաբարտերէն ստիպեալ և ցարդ ընտրուած կեդրոնաւայրերուն մեզ անյարմարագոյն լինելէն և վրոյ տալէն ձանձրացած, կ'յայտարարենք թէ «Հանրագիտակ»ի բուն Խմբագրատունն է Պոլիս, Կէտիկ Փաշայ, Ասմալը-փողոց Թիւ 17 տունը՝ Տոգդոր Լեւոն Աշղեւան էֆէնաիի դարմանատանը կից, ուր կրնան գտնել զմեզ տեսնել փափաքող բարեկամք։